ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հուլիսի 2026 թվականի N 947 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 588-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 30-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԻԹ ՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 588-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ցանկի 2-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը» սյունակի «0209101100» թիվը փոխարինել «0203295501» թվով.

2) ցանկի 2-րդ կետի «Անվանումը» սյունակի «Խոզի ճարպ» բառերը փոխարինել «Անոսկոր խոզի միս» բառերով.

3) ցանկի 2-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «Ունի բարձր կալորիականություն (720-900 կկալ/100գ) և դյուրամարս է, բնութագրվում է սպիտակ կամ բաց վարդագույն գույնով, պինդ կառուցվածքով և ցածր հալման ջերմաստիճանով: Այն հարուստ է հագեցած և չհագեցած ճարպաթթուներով» բառերը փոխարինել «Անոսկոր խոզի միսն աչքի է ընկնում բարձր սննդային արժեքով, փափուկ հյուսվածքով, միջմկանային ճարպի զգալի պարունակությամբ: Այն բնութագրվում է փափկությամբ, հեշտ մարսելիությամբ և բարձր կալորիակա-նությամբ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ